2010 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՍՆՄԵԿ ԱՄՍՎԱ ՆԱԽԱՀԱՇՎԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

2010 թվականի տասնմեկ ամսվա ընթացքում ճշտված նախահաշվի եկամուտները հավաքագրվել են պլանային ցուցանիշների նկատմամբ 96.6 տոկոսով:

Եկամուտների գերակշիռ /64.0 տոկոս/ մասը կազմող վճարովի ուսուցման ծառայությունները դեկտեմբերի 1-ի դրությամբ հավաքագրվել են 99.0 տոկոսով, և հաշվի առնելով այս ուսումնական կիսամյակի համար դեռ չվճարված ուսման վարձերը՝ կարելի է ասել, որ այս հոդվածով նախատեսված պլանային ցուցանիշը կգերակատարվի տարեկան կտրվածքով, ինչպես նաև նախատեսված հնարավոր կորուստների պահուստային ֆոնդը չի օգտագործվի: Այն պայմանավորված է այս ուսումնական տարվա նախատեսված ընդունելության ցուցանիշները գերազանցելու հետ թե՛ առկա և թե՛ հեռակա ուսուցման համակարգերում բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական աստիճաններով: Առկա ուսուցման բակալավրիատի ուսման վարձի միջին չափը ԵՊՀ-ում 2010 թվականին կազմել է 355.8 հազար դրամ:

Պետական բյուջեից ֆինանսավորումները ստացվում են ըստ սահմանված ժամանակացույցի: Առկա ուսուցմամբ բակալավրիատի ուսման վարձի միջին չափը պետական ֆինանսավորմամբ կազմում է 257.1 հազար դրամ:

Գործառնական այլ եկամուտների ցուցանիշը կազմել է 80 տոկոս նախատեսվածի նկատմամբ, ինչը կարելի է դրական գնահատել, քանի որ հյուրերի տան, Ծաղկաձորի ուսումնաարտադրական բազայի եկամուտների զգալի մասը հավաքագրվում է դեկտեմբեր ամսին՝ ելնելով նախորդ տարիների կատարողական ցուցանիշներից: Տարածքի վարձակալությունից ստացվող եկամուտները, որոնք հավաքագրվել են 76 տոկոսով, այստեղ վարձակալ կազմակերպությունների կողմից կուտակվել են դեբիտորական պարտքեր, ինչի համար տարվում է աշխատանք այդ պարտքերը գանձելու

նպատակով: Գրեթե չեն կատարվել տպագրական ծառայություններից ստացվող եկամուտները, սակայն այդ ցուցանիշը ընդհանուրի մեջ կազմում է 0.1 տասնորդական տոկոս, որի պատճառով էլ այն ազդեցություն չունի կատարողականի վրա:

Ոչ գործառնական եկամուտները գերակատարվել են հիմնականում դրամաշնորհային ծրագրերով, ինչպես նաև բանկում ավանդ ձևակերպված միջոցներից ստացվող տոկոսներից:

Ծախսերի կատարողականը նախատեսվածի նկատմամբ կազմել է 86.4 տասնորդական տոկոս, և հաշվի առնելով, որ ծախսերի գերակշիռ մասը կազմող աշխատանքի վարձատրության ծախսերը դեկտեմբեր ամսին կատարվում են կրկնակի չափով, ապա մնացած ծախսերի կատարողականը կազմել է 90.5 տոկոս:

Ծախսերը նախատեսված ցուցանիշների նկատմամբ գերակատարվել են 6 հոդվածներով, որոնցից 3-ը թույլատրելի 10 տոկոսի սահմաններում է, իսկ մնացած 3 հոդվածներից խոշորը վերաբերում է ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման հոդվածին. այն պայմանավորված է լաբորատոր սարքավորումների ձեռքբերման հետ, որի համար ակնկալվում է նպատակային բարեգործական եկամուտ այս հաշվետու տարում:

Հաջորդը դրամաշնորհային հոդվածով նախատեսված ծախսերն են, որոնք պայմանավորված էին դրամաշնորհային ծրագրերով նախատեսված մուտքերի գերակատարմամբ:

Անդամավճարային ծախսերը, որոնք գերակատարվել են 20 տոկոսով, պայմանավորված են հիմնականում միջազգային կազմակերպություններին անդամակցությամբ: Այդ կազմակերպություններից են՝

- Եվրոպական համալսարանների ասոցիացիան,
- Սևծովյան տարածաշրջանի համալսարանների ասոցիացիան:

Միջազգային կազմակերպություններին անդամակցում են նաև ֆակուլտետները օրինակ՝ Տնտեսագիտության ֆակուլտետը /Հարվարդի համալսարան/, Իրավագիտության ֆակուլտետը /Ուսանողների միջազգային ասոցիացիա/, Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետը /Միջազգային

աշխարհագրական միություն/: Անդամավճարային ծախսերը ընդհանուրի մեջ կազմում են 0.1 տասնորդական տոկոս:

Ֆակուլտետային ծախսերը գերակատարվել են նախատեսված ցուցանիշների նկատմամբ: Այստեղ հիմնականում ծախսերի գերակատարումը ուղղվել է լսարանների համակարգչային տեխնիկայով, կահույքով, ուսանողական նստարաններով և սարքավորումներով վերազինմանը:

Ուսանողական միջոցառումների ծախսերը կատարվել են նախատեսվածի նկատմամբ տասնմեկ ամսվա ընթացքում, սակայն որոշ ծախսեր տրամադրվել են պահեստում առկա ապրանքներից, կամ կատարվել է վառելիքի ծախսեր, որն արտահայտվել է տրանսպորտային ծախսեր հոդվածով:

Ստորաբաժանումների ծախսերը ևս տասնմեկ ամսվա կտրվածքով կատարվել են նախատեսվածի նկատմամբ:

Կառուցվածքային ստորաբաժանումների նախատեսված եկամուտները չեն կատարել Բյուրականի և Հանքավանի ուսումնաարտադրական բազաները, իսկ գերակատարել են ատամնաբուժարանը և հոգեբանության կենտրոնը: